# ԲԺՇԿԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N «ՎԲԿ-ՀՄԱԱՊՁԲ - 20/31 »

ք.Վանաձոր «_5_» _03_ 2020թ.

ՎԱՆԱՁՈՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ -ն ի դեմս տնօրեն Վ.Մկրտչյան-ի, որը գործում է ք.Վանաձոր Նժդեհի փողոց 2/42 -ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից. և «ԷՅՉԷՄԷՍ» ՍՊԸ -ն, ի դեմս տնօրեն Մելիք Հարությունյան-ի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են _5_ օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

* *լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*

...ծ գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու ...արած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

... Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է ...րը.

...1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ...ատում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են __5__ օրից ավելի.

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

...ագրի գինը կազմում է 4340000 /չորս միլիոն երեք հարյուր քառասուն հազար/ ՀՀ դրամ, ներառ...
...Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմի...
...ելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսեր...
...ավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնել, ...
...որդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամակա... միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցում... կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույց... (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետ... և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարում... իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբեր... 30-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետակա... ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունմա... արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջ... երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառող... Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղ... (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացմա... ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նա... հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունմա... արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները... որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայք... «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդ... պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված _5... աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցո... Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա... ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի... պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետու... նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնու... հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասակա... եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրու... նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված... պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը... կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2... կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների... համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանա-գրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված... մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման... դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման... ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

...յմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք ...ալու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0.5 (զրո ամբողջ ...որդական) տոկոսի չափով:[20] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը ...անագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում...

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են ...ողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի ...պատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա ...ակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[21]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

---

[20] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

...մ է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից ...յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք ...են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի ...յան փոփոխման:

...պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք ...ում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ ...պատշաճ կատարման համար.

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:[23]

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների

---

...մեպքում նաև նոր ապահովները Գնորդին ներկայացնում է [illegible]
...անից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

**Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ | «ԷՅՉԷՄԷՍ» ՍՊԸ |
| Ք.Վանաձոր, Գ. Նժդեհի 2/42 | ՀՀ ք. Երևան,0002,Ամիրյան 18/3 բն 9 |
| «ՀայԲիզնեսբանկ» Վանաձոր մ/ղ | ՀՎՀՀ 02641378 |
| Ց/Հ 1150004484110100 | «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ |
| ՀՎՀՀ 06945592 | Հ/Հ 1150010139829843 |
| Տնօրեն՝ Ա. Մկրտչյան | Տնօրեն՝ Մ.Հարությունյան |
| Կ.Տ. | |
| ստորագրություն | /ստորագրություն/ |
| | Կ.Տ. |

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | տեխնիկական բնութագիրը | ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը ** | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | | | | | հասցեն | ենթակա քանակը | Ժ |
| 1 | 33141223 | Անգիոգրաֆիկ ծածկոց | Անգիոգրաֆիկ Փաթեթ-Ծածկոց-Նախատեսված Անոթների Անգիոգրաֆիկ Հետազոտությունների<br>Չափման Միավորի 1 հատը -1 ՀԱՏ<br><<ՍՏԵՐԻԼ>> ԼՐԱԿԱԶՄԻ<br><br>Մեկանգամյա օգտագործման ստերիլ անգիոգրաֆիկ հավաքածու-լրակազմ, որը բաղկացած է. Հիվանդի ծածկոց՝ 58գր/մ² տրիֆլեքս PP28gr+PE6+PP24gr+-1 կտորից 220x310սմ չափսի, 100x310սմ չափսի ներծծվող հատվածով, 12սմ ֆեմորալ անցքերով և 9սմ կպչուն թաղանթներով ռադիալ անցքերով, երկու կողմանի թափանցիկ պանելով, Պարագաների սեղանի ծածկոց 56գր/մ² բիֆլեքս կտորից 140x190սմ, Բժշկի և բժշկի օգնականի անթափանց հատվածով պաշտպանիչ ստերիլ խալաթ 2 հատ XL չափսի 2 պաշտպանիչ շերտ և 43 գր/մ2 SMS, կարերը ուլտրասոնիք տեսակի Անգիոգրաֆի ռեֆլեկտորի ծածկոց, Ռտնակի ծածկոց, Մանիֆոլդ սեթ-երեք ծորականի կոնեկտոր բարձր ճնշման, կոնտրաստ նյութի, ինվազիվ ճնշման և ֆիզ. լուծույթի խողովակներով /ստերիլ փաթեթի մեջ/, որտեղ ներառված է | | հատ | 14800 | 2516000 | 170 | Ք. Վանաձոր, Գ. Նժդեհի 2/42 | 170 | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | նաև Լուեր Լոք ներարկիչ 12մլ հատուկ բռնակով/ ստերիլ փաթեթի մեջ/,Ախտորոշիչ-ուղղորդիչ լար 150սմ; 0.35; J տիպի/ստերիլ փաթեթի մեջ/, լուեր լոք ներարկիչ 20մլ - 1հատ/ստերիլ փաթեթի մեջ/, լուեր լոք ներարկիչ 10մլ-2հատ/ստերիլ փաթեթի մեջ/, Պունկցիոն ասեղ սելդինգեր 18G – 7սմ/ստերիլ փաթեթի մեջ/, Սրբիչներ 40x50սմ - 8 հատ (5 հատ փակ/ստերիլ փաթեթ, 3 հատ ոչ ստերիլ/բաց); Ստերիլ թանզիֆ 7.5x7.5սմ – 20հատ (10 հատ փակ, 10 հատ բաց),Փայտիկով սպունգ վիրահատական դաշտը մշակելու համար, Բռնակով նշտարի սայր /ստերիլ փաթեթի մեջ/, Տակով ստերիլ վիրաբուժական ձեռնոցներ/ստերիլ փաթեթի մեջ/ - 7.0 – 1 հատ; 7.5 – 2 հատ; 8.0 – 2 հատ, Կպչուն հատվածով գործիքների կամ թափոնների տոպրակ 25x55 -2 հատ, ներարկիչ ասեղով ինսուլինի 1մլ/ստերիլ փաթեթի մեջ/, ներարկիչ 2մլ -ասեղով Լուեր Սլիփ/ստերիլ փաթեթի մեջ/, ներարկիչ 5մլ-ասեղով Լուեր Սլիփ/ստերիլ փաթեթի մեջ/,Թասիկ ողանկյուն 1000 մլ:Ցանկացած մատակարարված խմբաքանակի համար EO, CE MARK կամ FDA և ISO 13485 որակի վկայականների առկայությունը պարտադիր է: Պետք է լինի նոր, չօգտագործված, գործարանային ստերիլ փաթեթավորմամբ Tyvek կամ համարժեք հիդերբաց <երկկողմանի թափանցիկությամբ> + Էթիլեն Օքսիդի ինֆիկատոր նաև ներառված ապրանքների ինքնակպչուն ընդհանուր պիտակ որի ԲԱՐԿՈԴ և պիտանելիության ժամկետի հատվածը առանձնանում է 3 պլոկվող ինքնակպչուն պիտակի գրանցամատյաններում և/կամ հիվանդության պատմագրերում,: Ներառված բոլոր պարագաները պետք է լինեն ստերիլ,էթիլեն օքսիդի ստերլիզացիան ապացուցող ինդիկատորով փաթեթ անջատ փաթեթավորումներով: Ներառի տեխնիկական ցուցանիշները, առանձնահատկությունները և օգտագործման կանոնները՝ գործարանային ձեռնարկի ձևով: Հանձնելու պահին պետք է ունենա ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն 70%-ը: **Չափման միավոր 1 հատը հավասար է 1 հատ ստերիլ լրակազմի:** | | | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2 | 33141223 | Անգիոգրաֆիկ ծածկոց | **Անգիոպլաստիկ Փաթեթ-Ծածկոց-Նախատեսված Անոթների Ստենտավորման կամ Անգիոպլաստիկ Վիրահատությունների Համար Չափման Միավորի 1 Հատը=1 ՀԱՏ <<ՍՏԵՐԻԼ>> ԼՐԱԿԱԶՄԻ**<br><br>Մեկանգամյա օգտագործման ստերիլ անգիոպլաստիկ հավաքածու-լրակազմ,որը բաղկացած է- հիվանդի ծածկոց 58գր/մ² տրիֆլեքս PP28gr+PE6+PP24gr+-1 կտորից 220x310սմ 220x310սմ չափի , ներծծվող հատվածով, ֆեմորալ անցքերով 12սմ և ռադիալ անցքերով 9սմ կպչուն թաղանթներով ,երկու կողմանի թափանցիկ պանելով;Բժշկի և ասիստենտի ստերիլ անթափանց հատվածով պաշտպանիչ խալաթ 2 հատ XL չափսի 2 պաշտպանիչ շերտ և 43 գր/մ2 SMS, կարերը ուլտրասոնիք տեսակի ;Անգիոգրաֆի ռեֆլեկտորի ծածկոց – 2հատ; Մանիֆոլդ սեթ-երեք ծորականի կոնեկտոր բարձր ճնշման, կոնտրաստի և ֆիզ. Լուծույթի խողովակներով/ստերիլ փաթեթի մեջ/, որտեղ ներառված է նաև Լուեր Լոք ներարկիչ 12մլ հատուկ բռնակով/ստերիլ փաթեթի մեջ/;Ախտորոշիչ-ուղղորդիչ լար 150սմ, 0.35; J տիպի/ստերիլ փաթեթի մեջ/; լուեր լոք ներարկիչ 20մլ - 2հատ/ստերիլ փաթեթի մեջ լուեր լոք ներարկիչ 10մլ-2հատ/ստերիլ փաթեթի մեջ/; Ոտնակի ծածկոց -1հատ; Պունկցիոն ասեղ սելդինգեր 18G – 7սմ/ստերիլ փաթեթի մեջ/; Սրբիչներ 40x50սմ - 8 հատ(5 հատ փակ, 3 հատ բաց); Պարագաների սեղանի ծածկոց 56գր/մ2 բիֆլեքս կտորից 140x190սմ; Ստերիլ թանձիֆ 7.5x7.5սմ - 20հատ (10 հատ փակ, 10հատ բաց); Փայտիկով սպունգ վիրահատական դաշտը մշակելու համար; Բռնակով նշտարի սայր /ստերիլ փաթեթի մեջ/; Թասիկ կլոր 500մլ; Թասիկ ուղանկյուն 2500մլ; Ինդեֆլյատոր-Մեղֆլատոր- 30ատմ, 20մլ/cc, եռուղի-ծորակով -Մթում լուսավորվող էկրանով<<luminescent>> և 3 կողմանի ծորակը/ստերիլ փաթեթի մեջ/; Y/Վայ – կոնեկտոր զսպանակաձև սեղմակ փականով և 25սմ բարձր ճնշման խողովակով, ուղղորդիչ լարի ասեղ, ուղղորդիչ լարի պտտման գործիք-տորքեր/ստերիլ | | հատ | 30400 | 1824000 | 60 | Ք. Վանաձոր, Գ. Նժդեհի 2/42 | 60 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | փաթեթի մեջ/; Տալկով ստերիլ վիրաբուժական ձեռնոցներ/ստերիլ փաթեթի մեջ/-7.0 –2 հատ; 7.5 – 2 հատ; 8.0 –1 հատ, ներարկիչ ասեղով ինսուլինի 1մլ/ստերիլ փաթեթի մեջ/; ներարկիչ 2մլ -ասեղով Լուեր Սլիփ/ստերիլ փաթեթի մեջ ներարկիչ 5մլ-ասեղով Լուեր Սլիփ/ստերիլ փաթեթի մեջ/; Կպչուն հատվածով գործիքների կամ թափոնների տոպրակ 25x55 -2 հատ :<br>Ցանկացած մատակարարված խմբաքանակի համար EO, CE MARK կամ FDA և ISO 13485 որակի վկայականների առկայությունը պարտադիր է: Պետք է լինի նոր, չօգտագործված, գործարանային ստերիլ փաթեթավորմամբ Tyvek կամ համարժեք հիդերբագ <երկկողմանի թափանցիկությամբ> + էթիլեն Օքսիդի ինֆիկատոր նաև ներառված ապրանքների ինքնակպչուն ընդհանուր պիտակ որի ԲԱՐԿՈԴ և պիտնելիության ժամկետի հատվածը առանձնանում է 3 պլոկվող ինքնակչուն պիտակի գրանցամատյաններում և/կամ հիվանդության պատմագրերում: Ներառված բոլոր պարագաները պետք է լինեն ստերիլ,էթիլեն օգսիդի ստերլիզացիան ապացուցող ինդիկատորով փաթեթ անջատ փաթեթավորումներով: Ներառի տեխնիկական ցուցանիշները, առանձնահատկությունները և օգտագործման կանոնները՝ գործարանային ձեռնարկի ձևով: Հանձնելու պահին պետք է ունենա ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն 70%-ը : **Չափման միավոր 1 հատը հավասար է 1 հատ ստերիլ լրակազմի:** | | | | | | | | |

*** Եթե հրավերով չի նախատեսվում մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, ապա հանվում են «ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը » սյունակը: Պայմանագրով նախատեսված դեպքում Վաճառողը Գնորդին ներկայացնում է նաև ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատ:*

**Ծանոթություն**

Այն չափաբաժիններում, որոնց անվանումներում և տեխնիկական բնութագրերում առկա են հղումներ ֆիրմայի անվանմանը, արտոնագրին, էսքիզին կա… կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին կիրառական է <<կամ համարժեք>> արտահայտությունը, ՀՀ գնումների մասին օրենքի սահմ… համապատասխան:

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| «Վանաձորի բժշկական կենտրոն» ФԲԸ | «ԷՅՉԷՄԷՍ» ՍՊԸ |
| Ք.Վանաձոր, Գ. Նժդեհի 2/42 | ՀՀ ք. Երևան,0002,Ամիրյան 18/3 բն 9 |
| <ՀայԲիզնեսբանկ>Վանաձոր մ/դ | ՀՎՀՀ 02641378 |
| Ҳ/Ҳ 1150004484110100 | «Հայբիզնեսբանկ» ФԲԸ |
| ՀՎՀՀ 06945592 | Հ/Հ 1150010139829843 |
| Տնօրեն՝ Ա. Մկրտչյան | Տնօրեն՝ Մ. Հարությունյան |
| ստորագրություն Կ.Տ | /ստորագրություն/ Կ.Տ |

«   5   »   03
ՎԲԿ-ՀՄԱԱՊՁԲ -20/31   ծածկագրով

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին՝ ըստ ամիսների** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդ |
| 1 | 33141223 | Անգիոգրաֆիկ ծածկոց | % | % | % | 2795<br>56 | 55<br>911<br>1 | 8386<br>67 | 11182<br>22 | 139<br>777<br>8 | 1677<br>333 | 195688<br>9 | 2236<br>444 | 251600<br>0 | |
| 2 | 33141223 | Անգիոգրաֆիկ ծածկոց | % | % | % | 2026<br>67 | 40<br>53<br>33 | 608<br>000 | 8106<br>67 | 101<br>33<br>33 | 1216<br>000 | 1418667 | 1621<br>333 | 182400<br>0 | 1 |

** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

**ԳՆՈՐԴ**

«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ
Ք.Վանաձոր, Գ. Նժդեհի 2/42
<ՀայԲիզնեսբանկ> Վանաձոր մ/ճ
Հ/Հ 1150004464110100
ՀՎՀՀ 06945592
Տնօրեն՝ Վ. Ալեքսանյան
Կ.Տ
ստորագրություն

**ՎԱՃԱՌՈՂ**

«ԷՅՉԷՄԷՍ» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան,0002,Ամիրյան 18/3 բն 9
ՀՎՀՀ 02641378
«ՀայԲիզնեսբանկ» ՓԲԸ
ՀՀ 1150010139829843
Տնօրեն Ա. Հարությունյան
/ստորագրություն/
Կ.Տ